«ԱՐԳԻՆԱ»
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՎԱՆԱՁՈՐ, ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն վերլուծությունն իրականացվել Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ենթադրամաշնորհ հանդիսացող ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Արգինա» մշակութային հասարակական կազմակերպության և «Միջհամայնքային համագործակցություն հանուն գյուղական համայնքների զարգացման» ՀԿ-ների կոնսորցիումը:

Վերլուծություն.

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին զգալի առաջընթաց է արձանագրվել հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում, սակայն իրականացված հետազոտության արդյունքները փաստում են, որ հաշմանդամություն ունեցող երեխաները լուրջ խոչընդոտների են հանդիպում կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայություններից օգտվելու հարցում:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված օրենսդրական դաշտը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, իրավական այլ

ակտերի և Ազգային Ժողովում վավերացված միջազգային համաձայնագրերի և կոնվենցիաների վրա:

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ «յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»: Բարձրագույն իրավաբանական ուժով օժտված Սահմանադրությունում ամրագրված է հաշմանդամների սոցիալական ապահովության իրավունքը:

1993 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետությունը ընդունել է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտը կանոնակարգող օրենք: «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է «հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները»:

2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծումը և իրավահարաբերությունները կարգավորվում են նաև մի շարք այլ իրավական ակտերով:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան 2010 թվականին: Վավերացնելով կոնվենցիան՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել սատարել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդկային իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար և հավասար իրացումը: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանում զգալի առաջընթաց է արձանագրվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Վերջին տասնամյակում փոխվել է հաշմանդամության գաղափարախոսությունը, փոխվել են մոտեցումները՝ բժշկական մոդելը փոխարինվել է սոցիալական մոդելով, ինչը ենթադրում է ոչ միայն հավասար իրավունքներ, այլև հավասար հնարավորություններ և պարտականություններ: Սակայն շատ հաճախ հաշմանդամների սոցիալական պաշտպանությանն առնչվող օրենսդրական ակտերի որոշ դրույթներ գործնականում չեն կիրառվում կամ կիրառվում են ոչ լիարժեք՝ <u>մեխանիզմների հստակ չլինելու և չկիրառելու դեպքում պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների բացակայության պատճառով:</u>

Համաձայն կատարված վերլուծության արդյունքների՝ ՀՀ-ում հաշմանդամների իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական դաշտը հիմնականում համապատասխանում է միջազգային նորմերին, բխում է հաշմանդամների իրավունքներից և օրինական շահերից: Միևնույն ժամանակ, իրավական ակտերում առկա դրույթները հաճախ մնում են թղթի վրա՝ չունենալով զգալի ազդեցություն հաշմանդամների կյանքի որակի վրա:

Նպատակ.

Լոռու մարզում գործող համայնքային աջակցության կենտրոնների գործունեության բարելավման նպատակով իրականացնել մշտադիտարկում, իրականացնել ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի և ներառական կրթության հայեցակարգի վերլուծություն, վեր հանել առկա հիմնախնդիրները և դրանց լուծման առաջարկություններ ներկայացնել:

Ընտրանք.

Մշտադիտարկման համար ընտրվել են մանկավարժահոգեբանական աջակցության թվով 3 կենտրոններ և ցերեկային արտադպրոցական ծառայություն տրամադրող թվով 3 կենտրոններ, որոնց գործունեությունն իրականացվում է հասարակական կազմակերպությունների կողմից:

Ընտրված կառույցներն են՝

1. Վանաձորի մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն
2. Ստեփանավանի մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն
3. Ալավերդու մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն
4. «Առավոտ» հասարակական կազմակերպություն /Վանաձոր/
5. «Փոքրիկ իշխան» համայնքահեն ցերեկային աջակցության կենտրոն /Վանաձոր/
6. «Լիարժեք կյանք» ՀԿ-ի «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոն» /Ստեփանավան/

Մեթոդներ.

Մոնիտորների և ծրագրի աշխատակազմի կողմից իրականացվող ուսումնասիրությունների և հետազոտությունների համար որպես մեթոդաբանություն ընտրվել է առաջնային տեղեկատվության հավաքագրման սոցիոլոգիական հիմնական մեթոդների կիրառումը՝ հարցազրույց, ֆոկուս խմբային քննարկում և դիտարկում.

1. Խորին հարցազրույցներ և առանցքային տեղեկատուների հարցազրույցներ համայնքային աջակցության կենտրոնների 12 ներկայացուցիչների հետ (ղեկավարներ և բազմամասնագիտական թիմի անդամներ)
2. ֆոկուս-խմբային 2 քննարկումներ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների մասնակցությամբ
3. Դիտարկում 6 կենտրոններում:

Դիտարկման մեթոդը կիրառվել է հետազոտության ընտրանքում ներառված համայնքային աջակցության 6 կենտրոններում, որը թույլ է տվել բացահայտել համապատասխանությունը մատչելիության շինարարական նորմերին: Օբյեկտի մասին համադրելի և կազմակերպված քանակական տվյալներ ստանալու նպատակով կիրառվել է ձևայնացված դիտարկման քարտ:

Ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի վերլուծություն

<Հանրակրթության մասին> ՀՀ օրենքը ընդհանրական ձևակերպում է տալիս դպրոցների ֆիզիկական համարեցվածության չափանիշներին: Համաձայն <Հանրակրթության մասին> ՀՀ օրենքի՝ խոսքը գնում է **ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի** մասին, որոնց բովանդակային կողմը չի նշվում:

Հանրակրթական դպրոցների ֆիզիկական միջավայրի չափանիշները և պայմանները սահմանվում են ՀՀ առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» հավելվածով:

Նոր կառուցվող շինությունների համար առկա է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար շինարարական նորմերի հաստատման մասին» հրամանը:

ԿԱՊԿՈՒ երեխաների համար առանձին պայմաններ և կանոններ սահմանված չեն:

Մեր հետազոտության շրջանակներում պարզվեց, որ

1. հաստատությունների 80%-ի հիմնական մուտքերի մոտ առկա են թեքահարթակներ, սակայն դրանց 90%-ն առանց շեմի են, առանց բռնաձողի և առանց ծածկի, իսկ հաստատությունների ներսում թեքահարթակներ ընդհանրապես չկան: Երկհարկանի շենքերում տեղակայված հաստատություններում բացակայում են վերելակները: Հենաշարժական խնդիրներ ունեցող երեխայի համար սա բավականին վտանգավոր քայլ է և կարող է լուրջ վնաս հասցնել երեխայի առողջությանը:

2. Սանհանգույցների հարմարեցվածություն՝ ուսումնասիրված հաստատություններում սանհանգույցներ առկա են, սակայն դրանցից միայն 20%-ն է հարմարեցված ՀՈՒԱ կարիքներին:

3. Սպորտդահլիճի հարմարեցվածություն՝ որևէ հաստատություն չունի հարմարեցված սպորտային դահլիճ, առավել ևս մասնագետ-ուսուցիչ, ով կարող է պարապել ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ:

4. Առանձնահատուկ դասասենյակային

հարմարեցվածությամբ ևս որևէ հաստատություն աչքի չի ընկնում: Դասընթացները կազմակեպվում են բոլորի համար նախատեսված դասասենյակներում: Սա բավականին ծախսատար խնդիր է, որը այսօր որևէ հաստատություն սեփական միջոցներով չի կարող ապահովել:

Եզրակացություն

Առանձնացված վերոնշյալ չափանիշներից դպրոցների մեծամասնությունը մասամբ բավարարում է միայն առաջին չափանիշին: Մնացած չափանիշները գրեթե ամբողջությամբ բացակայում են: Հետևաբար, ֆիզիկական պայմանների տեսանկյունից ուսումնասիրված հաստատություններին կարելի է դասել խիստ թերհագեցվածների շարքին:

Առաջարկություններ

1. Սահմանել ներառական կրթություն իրականացնող դպրոցների ֆիզիկական միջավայրին վերաբերող չափանիշներ, նորմեր, կանոններ: /ՀՀ ԿԳՆ/:

2. Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ապահովել ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով սահմանված սանիտարական կանոնները և ստեղծել վերահսկման մեխանիզմներ: /ՀՀ Կառավարություն, ՀՀ ԿԳՆ, մարզպետարան, դպրոց/:

Ներառական կրթություն վերլուծություն

ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական գործընթացը կարգավորվում է Անհատական ուսուցման պլանի /ԱՈՒՊ/ միջոցով՝ երաշխավորված ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. նոյեմբերի 29-ի թիվ 1653 Ա/Ք հրամանով: Հարցաթերթի հարցերի մի խմբի միջոցով նպատակ էր դրվել պարզել ԿԱՊԿՈՒ ծնողների մասնակցության աստիճանը իրենց երեխաների ուսուցման պլանավորման գործընթացում՝ այսինքն, ԱՈՒՊ-ների նպատակների, գործողությունների և արդյունքների սահմանման և իրականացման աշխատանքներում:

Հարցումներին մասնակցած ծնողների շրջանում գոյություն ունի թերի տեղեկացվածություն կրթական կարիքների գնահատման գործընթացի էության և դրա նպատակների վերաբերյալ: Ըստ նրանց, գնահատման փաստաթուղթը պահանջ է դպրոցի կողմից, դրա համար այն ձեռք են բերում՝ ընդհանրապես պատկերացում չունենալով այդ գործընթացի կարևորության մասին: Թեև գործընթացի նպատակը ծնողների մի մասը չի ընկալել, սա ամենևին չի նշանակում, որ գնահատումն ընդհանրապես տեղի չի ունեցել: Պարզապես ո՛չ դպրոցի, ո՛չ էլ գնահատման կենտրոնի մասնագետները ծնողներին պատշաճ կերպով չեն բացատրել կարիքների գնահատման էությունը: Ծնողները նշում էին, որ եկել են ինչ-որ մարդիկ և երեխայի հետ զրուցել են, գույներ են ցույց տվել, հարցեր են տվել, ու

վերջում եզրակացրել են, որ երեխան կարող է գնալ կամ շարունակել գնալ դպրոց: Այս ցուցանիշները բավական մտահոգիչ են, որովհետև ԱՈՒՊ-ի (երաշխավորված ՀՀ ԿԳ նախարարի 29.11.2010թ. N1653 Ա/Ք հրամանով) «Անհատական ուսուցման պլանի կազմման սկզբունքները» բաժնի 1-ին կետում նշված է, որ ԱՈՒՊ-ի կազմման գործընթացում պարտադիր կերպով պետք է ներգրավվի աշակերտի ծնողը:

Եզրակացություններ

1. ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները իրազեկության պակասի և ցածր մոտիվացիայի պատճառով պասիվ մասնակցություն ունեն իրենց երեխաների կրթության և զարգացման գործընթացներին, մասնավորապես՝ ԱՈՒՊ-ների պատրաստման, բազմամասնագիտական խմբի, զարգացման արդյունքների քննարկման հարցում:

2. Թույլ է ԱՈՒՊ-ների պատշաճ լրացման և վարման աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը դպրոցի տնօրինության կողմից:

3. Ուսուցիչները չունեն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ արդյունավետ ուսուցման գործընթաց կազմակերպելու և անցկացնելու համար:

4. Թույլ է ուսուցիչների և ծնողների համագործակցությունը, չկան տեղեկատվության փոխանակման և արդյունավետ հաղորդակցման մեխանիզմներ:

Առաջարկություններ

1. Ծնողների համար կազմակերպել դասընթացներ, սեմինարներ, տրամադրել խորհրդատվություններ ներառական կրթության գաղափարների և դրանց ներդրման քայլերի, ներառական կրթության իրականացման դերակատարների գործառույթների վերաբերյալ: /ՀՀ ԿԳՆ/

2. ԱՈՒՊ-ների վարման կարգում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ մեծացնելով այդ գործընթացում ներգրավված բոլոր կողմերի պատասխանատվությունները և ուժեղացնելով վերահսկողությունը: Մասնավորապես, հստակեցնել՝ ով է պատասխանատու ԱՈՒՊ-ների վարման համար: ԱՈՒՊ-ների կից «Երեխայի թղթապանակի» պահանջը դարձնել պարտադիր՝ սահմանելով թղթապանակի պարունակությունը: /ՀՀ ԿԳՆ/

3. Ապահովել ուսուցիչների գիտելիքների ու կարողությունների շարունակական զարգացումը տարբեր խնդիրներ ունեցող երեխաների ուսուցումն արդյունավետ կազմակերպելու համար: /ՀՀ ԿԳՆ, դպրոց/

4. Բարելավել ուսուցիչների, ծնողների, հատուկ մանկավարժների հաղորդակցման և անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման հնարավորությունները՝ ստեղծելով ֆորմալ մեխանիզմներ: Մշակել և ներդնել

դպրոցի տնօրինության կողմից պարբերական հանդիպում-քննարկումների մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցության խթանման նպատակով: /ՀՀ ԿԳՆ, ՀՈՒՀ/

5. Դպրոցներում հատուկ մանկավարժական ծառայությունները իրականացնել անհատականացված մոտեցումների հաշվառմամբ՝ առավելագույնս չընդհատելով սովորողի դասապրոցեսը: /ՀՀ ԿԳՆ, ՀՈՒՀ/